

րերը», «ծակ-քարերը», «թուխ-մանուկները» եւ այլն, որոնք այնքան տարածուած են Հայաստանում, ամենահին ժամանակներից կանգուն մնալով. խաչքարեր, որոնք ներկայում այս կամ այն սրբի ու նահատակի անունով են յայտնի կամ նրանց գերեզմաններ են համարում եւ որոնք, իբրեւ «զօրաւոր» քարեր, պաշտամունքի առարկայ են դարձել հայ ժողովրդական դանգուածների մէջ:

Հոգեպաշտական հաւատալիքներով սնուած հայ ժողովրդի մէջ այն համոզումն էր տիրում, թէ մեռեալի հոգին տեղափոխում է քարի կամ ծառերի եւ կամ կենդանիների մէջ: Սակայն ծառերն ու կենդանիներն ինքնին յաւիտենական չեն. նրանք էլ ժամանակի ընթացքում ոչնչանում են: Բայց քարը մնում է անյիշելի տարիներով կանգուն եւ ուրեմն աւելի ապահով օթեւան է ներկայացնում մեռեալների հոգիների համար: Այդ պատճառով քարերը, իբրեւ պաշտաման առարկայ, աւելի համատարած են: Նախապատմական հայը քարերի մէջ էր ապրեցնում այն հոգիներին, որոնք էական նշանակութիւն ունեն նրա կեանքում, նրա գոյութեան պայքարում: Նախահայրերը, ժողովրդական հերոսները, առաջնորդները, տոհմական հիմնադիրները, մողերն եւ այլն, որոնց հոգիները շարունակում են նախկին ազգեցութիւնն պահպանել կենդանի մնացած տոհմակիցների նկատմամբ, անշուշտ մնայուն յիշատակի են արժանանում եւ դառնում են սրբազնացած քարէ յուշարձաններ: Նրանց յիշատակի հետ է կապում ժողովուրդը իր առանին կեանքի, իր տնտեսական բարօրութեան, իր Ֆիզիկական գոյութեան հանգամանքները:

Այնտեղ, ուր պայքարը բնութեան ուժերի մէմ, ուր մարդկային աշխատանքը, արտադրական միջոցներն ու ձեւերը տակաւին պահում են մարդուն շրջապատ բնութեան բացարձակ տիրապետութեան ներքոյ եւ զդալ են տալիս մարդու անհատական անօնականութիւնն ու անվերապահ կախումն այդ բնութիւնից, այստեղ մարդը օդնութիւն եւ նեցուկ է որոնում այն ողիների մէջ, որոնք ըստ դարեւոր աւանդութեան իր զօրաւոր նախնիքների հոգիներն են եղել, այժմ քարերի մէջ բնակուող: Եւ նախնական մարդն իր ամէն մի քայլը կապում է այդ ողիների հետ, իր բոլոր գոր-

ծողութիւնները դնում է նրանց հովանուներքոյ, հաւատացած նրանց զօրութեամնը, համոզուած, թէ այդ ողիները շրջապատ բնութեան բաղկացուցիչ մասն են կազմում եւ պատրաստ են որոշ հանգամանքներում իրեն օժանդակել, իր անկար վիճակին նըպաստաւոր պարագաներ հայթայթել:

Այդ հաւատը դէպի քարերի մէջ փոխուած հոգիները անհուն դարերի ընթացքում վերածւում է ֆետիշիզմի, մի տեսակ նիւթականանում է: Նախնական մարդու ֆետիշիստական հայացքներում սոսկ քարն է դառնում պաշտամունքի, երկրպագութեան առարկայ եւ ոչ թէ նրա մէջ ապրող ոգին: Այդ քարն է այժմ հանդիսանում այն գերբնական զօրութիւնը, որ իրեն օդնելու է գոյութեան կուռում, բնութեան ուժերի դէմ: Խաչքարերը, ծակ-քարերն եւ այն դառնում են արդին մի տեսակ կուռքեր:

Ահա հայ ժողովրդական հաւատալիքների մէջ նկատելի են մի կողմից՝ հոգեպաշտական մնացորդներ, ուրեմն աւելի հնագոյն քարէդարեան քաղաքակրթութեան հետքեր եւ միւս կողմից՝ առաւելապէս Փետիշիստական մնացորդներ, որոնք հանդիսանում են քարէդարեան աւելի նորագոյն (նէոլիտի) շրջանն բնորոշող գծեր:

Երեսան:

Խ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ

(Շարունակելիք:)



## ՊԻՀԻԼ ՀԱՅՈՑ ՄԵԶ ՄԵԶ ՄԵԶ

Ա.

### ՄԻՀԻ ԱՆՈՒԿԱՆ

1.

Հայ հեթանոսական կրօնն ուսումնասիրողները կրակի ու արեւի աստծուն — Միհրին շատ երկրորդական տեղ են յատկացնում հայ դիցաբանութեան մէջ: Այսպէս, օրինակ, Մ. իմինն ու Հ. Գելցերը հայ դիցաբանութեան մասին դրած տեսութիւնների մէջ այս աստծուն նուիրում են մի քանի տող միայն<sup>1</sup>: Այս ընթացիկ կարծիքի հակառակ պէտք է ասել, որ Միհրի պաշտամունքը շատ

<sup>1</sup> Н. О. Эмин, „Изследования и статьи“, Москва, 1896, № 26—27 ու Հ. Գելցեր, „Հետազոտութիւն հայ դիցաբանութեան“, „Բաղմակեպն, Անհետիկ“, 1897, № 21:

մեծ տեղ է բռնել հայ հեթանոսական կեանքում:

Միհրին էր նուիրուած մի յատուկ տաճար Բագայառուում<sup>1</sup>: Բոլոր հեթանոսական տաճարները կոչվում էին մեհեան, որ Մ. իմինն ստուգաբանում է իրեւ միհրեան կամ մեհրեան, այսինքն միհրական<sup>2</sup>: Նրա անունով էր կոչվում հայ ամիսներից մէկը եօթեռորդը — Մեհեկանը կամ Մեհեկին<sup>3</sup>: Մեր գրականութեան մէջ հետքեր կան, որոնք վկայում են, թէ այս աստծուն էր ընծայուած ամէն ամսուայ օրերից մէկը, ութերորդը, որ նրա անունով կոչվում էր Միհր<sup>4</sup>: Միջնորդաբար կամ ոչ, նրա անունն էր կրում մի քաղաք Աղուանից աշխարհում — Միհրաւանը<sup>5</sup>: Նոյն այս Աղուանից երկրի իշխող տոհմերից մէկն անուանվում էր Միհրական կամ Միհրեան<sup>6</sup>, իսկ Սիւնիքում յիշվում են Մահեւանեանք<sup>7</sup>: Միհր անունով է կոչվում ոչ միայն Աղուանից երկրի նախարարական տներից մէկի հիմնադիրն, այլ եւ նոյն իսկ մէկ եպիսկոպոս, այն էլ մինչեւ անդամ է. դարում, այսինքն՝ քրիստոնէութեան մուտքից մօտ երկուս ու կէս դար յետոյ<sup>8</sup>: Վերջապէս ասելիքներս ընդարձակե-

<sup>1</sup> Ագաթանգեղայ սՊատմութիւն Հայոց, աշխ. Գ. Ցեր-Մկրտչեան ու Ստ. Կանայեանց, Տփղիս 1909, § 790, էջ 411—412:

<sup>2</sup> Հ. Թմին, 53: De-Lagarde-ը նշյապէս կապում է Միհր անուան հետ, իսկ Հ. Հիւրմանը համարում է չապացուած: Հ. Hübschmann, "Armenische Grammatik", I, Leipzig, 1897, էջ 194:

3 Հübschmann, "Arm. Gr.", 194 ու Հր. Աճառեան, "Անուանք Հայկական ամսոցն", "Բազմագէպ", 1897, էջ 394: Հմմո. Գ. Ալիշան, "Հին հաւատք Հայոց", Աւենտիկ 1895, էջ 141:

4 Ղ. Ալիշան, "Հին հաւատքո", 143:

5 Մովսիսի Կաղանկատուացույց "Պատմութիւն Աղուանից աշխարհին", Ղուկաս. մատեն. Ը, Թիֆլիս, 1913, գերբ Բ. Գ. Ժ. էջ, էջ 195—196: — "Միհրան . . . շնեաց յիւր անուն քաղաք մի կոչելով զնա Միհրաւան": Այս "յիւր անունը պատմագրի բացատրութիւնն է: Քաղաքը կարող էր կոչուած լինել հենց Միհր աստծու անունով: Հետաքրքրական է, որ ոմանք նաեւ Անայ միւս անունը — Շամիրամակերս — ստուգաբանել են իրեն: Շահ — Միհր — կերտ: Հմմո. Ստ. Կանայեանց. "Զոջանց տան յամաց ծուեր վէպի պատմականը", Վաղարշապատ, 1907, էջ 50: Ուշագրաւ է, որ այս ստուգաբանութիւնը հաստատում է կարծեցեալ Շապուհը, որի "Պատմութեան մէջ Վանը շորս անդամ կոչված էն ամուրն Շամիրայն", "Քաղաքն Շամիրայն ու Պատման Շամիրայն": Շամիր = Շահ-Միհր: Տես Ակապէց Բագրատունուց Պատմութիւնն, էջմանձին, 1921, էջ 47, 71, 74, 85:

6 Կաղանկատուացի, Բ. Ժ. 195, Գ. Ի. 386—387:  
7 Ստեփանոս Օքբելեան, "Պատմութիւն նահանգին Սիսականց", Ղուկաս. մատեն. Գ. Թիֆլիս, 1911, գլ. ՀԱ, էջ 490:

8 Կաղանկատուացի, Գ. Ի. 387 ու Բ. Մ. 318:

լով պէտք է շեշտենք, որ հայ դիցարանի (պանթէոն) ոչ մի աստուած այնքան հետքեր չէ թողել հայ անձնանունների բառզբրութում, որքան հուր-արեւ Միհրը: Ի՞նչ խօսք, որ անուան այս բազմապիսի հետքերը Միհր աստծու պաշտօռ պաշտամունքի երկրածաւալ տարածման անժխտելի ապացուցներ են<sup>1</sup>:

Նոյնքան ուշագրաւ է Միհր անուան փոփոխակների ստուար բազմազանութիւնը: Այս երեւոյթն անուան, ուրեմն եւ հնում պաշտամունքի ժողովրդականութեան հետեւանք է անշուշտ, մի այնպիսի ժողովրդականութեան, որի մնացորդները յարատեւում են զարեր ու հազարամիակներ շարունակ նոյն իսկ քրիստոնէութեան տերապետութեան շրջանում:

Մեր ձեռքի տակ ունեցած աղբիւրներով առ այժմ կարող ենք նշանակել Միհր անուան հետեւեալ փոփոխակները:

1. Միհրեր — «Միթրեւանց էին քուրմք Պարսից»<sup>2</sup>:

2. Միթր — Միթրուգան-Թորդան գիւղի հնագոյն անուան մէջ, որ ողաչել է Ազաթանգաղոսի արարերէն թարգմանութիւնը<sup>3</sup>:

3. Թոր — Միթրդանի հայկական ձեւի — Թորդան անուան մէջ, որ հանրայայտնի է մեր դասական գրականութիւնից:

<sup>1</sup> Անունը, որ հիմա էլ որոշ մշակոյթի նշանացոյց է, անչափ մեծ նշանակութիւն է ունեցել հնում, որքան եւս ենք գնում դէպի պատմութեան հնագոյն շրջաններն, այնքան մեծանում է անուան կրօնական-հմայական ընդութը: Անունը վայրենու ամենաթանգ ստացուածքն է: Վայրենների կարծիքով՝ "Բառերն իրերի հոգիներն են, նրանց տիպարները. Կրօնք ներկործում են իրեր կենդանի էակներու: Պ. Լաֆար, "Өкономический детерминизм", Москва, 1923, էջ 166: Անունների կրօնական-հմայական նշանակութեան մասին տեսէր Ferdinand Justi, "Iranisches Namenbuch", Marburg, 1895, էջ IV-VII:

<sup>2</sup> Յակոբոս Ա. Տաշեան. "Ուսումն գասական հայերէն լեզուի. Անդիք ժամանակիք", Այիննա, 1920, էջ 562, ծան. 1: Ե. Լալյետան "Գեղարքունիքը", Թիֆլիս, էջ 60, մի արձանագրութիւն ունի "Մեթորոն" Կ. Կոստանեանց Վիմական Տարեգիրոն, Ս. Գետերբորդ, 1913, էջ 134, արձ. 1291 թ./ձ. ունի "Մեթարոն": Ստեփանոս Ա. Միհրթարեանց "Ստորագրութիւն . . . Այրի վանց սրբոյն գեղարդայն", Վաղարշապատ, 1873, էջ 13, ունի "Ես մի Թորոսն, որ Մանկանին Այրիվանը կամ Գեղարդաց վանքը, Վաղարշապատ", 1871, էջ 19, կարդացել է "Ես Տիթորոսն": Սենք ուղղում ենք "Ես Միթրորոս: Արդեօք յեաին դարերի տարրեր անձանց այս Ոեթորո, Միթրը ու Միթրո անունները կապ չունեն Միթրա-Միհրի հետ:

<sup>3</sup> Հ. Մարը, „Կրещение армян, грузин, абхазов и аланов“, СПБ, 1905, էջ 119: "Մկրտչութիւն Հայոց վաց, աբխազց եւ ալանացն, թարգմ. Յուսիկ արք., Վաղարշապատ 1911, էջ 53, 119: Հմմո. Ստ. Կանայեանց. "Սասմայ ծռեր վէպի երեք փոփոխակն, Վաղարշապատ, 1910, Յառաջաբան, էջ 115:

4. Միքր — Միքր աստուած<sup>1</sup>, Միքր եպիսկոպոս Աղուանից, է. դարում<sup>2</sup>, Միքր-Արտաշելը, Սիւնեաց տէր<sup>3</sup>, Միքր Շապուհ Արծրունի<sup>4</sup>, Միքրան Թուրքայ որդի, Միւնեաց աղատ Ժ. դարում<sup>5</sup>, Ներս-Միքրի վանք Աղուանքում<sup>6</sup>, Միքրու Դիմաքսեան<sup>7</sup>:

5. Միքր — Միքր աստուած<sup>8</sup>, Միքր Աղուանից իշխան<sup>9</sup>, Միքրհեան տոհմ Աղուանքում<sup>10</sup>, Միքրհական տոհմ նոյնտեղ<sup>11</sup>, Միքրհաւան քաղաք նոյնտեղ<sup>12</sup>, Միքրհաւրա հայ մարդ<sup>13</sup>, Միքրհաւրիկ հազարապետ, Աղուանից իշխան<sup>14</sup>, Միքրհաւան Աղուանից թագաւոր<sup>15</sup>, Զար-Միքր կամ Զառ-Միքր Աղուանից իշխան<sup>16</sup>:

6. Միքր-Միքրաւան թագաւոր Աղուանից<sup>17</sup>:

7. Միքր — Միքր հայ մարդ<sup>18</sup>, Միքրան Միւնեաց աղատ<sup>19</sup>:

<sup>1</sup> Մասիսի Խորենացւոյ, «Պատմութիւն Հայոց», աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեանց, Տփղիս, 1913, Գ. Ժ. 276. Սերեսու «Պատմութիւն ի Հերակլու», Ղուկաս, մասեն, Է. Թիֆլիս, 1912, Գ. Գ. 58 եւայլ:

<sup>2</sup> Կաղանկատուացի, Բ. Ծ., 318:

<sup>3</sup> «Գրիգ թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 78. Օրբելեան, Ժ. Գ. 51, ԻԲ. 91, ԻԳ. 92, ԻԴ. 97:

<sup>4</sup> Հազարայ Փարպեցւոյ «Պատմութիւն Հայոց», աշխ. Գ. Տէր-Միքրաւան և Ստ. Մալխասեանց, Բ. Տ. 5 թ, 71:

<sup>5</sup> Օրբելեան, Լ. Թ., 208:

<sup>6</sup> Կաղանկատուացի, Գ. ԻԲ., 354:

<sup>7</sup> Սերեսու, Գ. Ժ. 100—101:

<sup>8</sup> Խորենացի, Գ. Ժ. 276 ծանօթ.:

<sup>9</sup> Կաղանկատուացի, Գ. ԻԲ., 385:

<sup>10</sup> Կաղանկատուացի, Գ. ԻԳ., 387:

<sup>11</sup> Կաղանկատուացի, Բ. Ժ. 195, Գ. ԻԳ. 386:

<sup>12</sup> Կաղանկատուացի, Բ. Ժ. 196:

<sup>13</sup> Լալայեան «Գեղարքունիք», 66. — «Հաւրն իւրոյ Միքր Հաւրացին», ուղղել՝ «Միքրհաւրացին»:

<sup>14</sup> Կաղանկատուացի, Ա. Ի. Ձ., 103, «Կանոնդիրք Հայոց», Խմբեց Արսէն Ղլունեան, Թիֆլիս, 1914, էջ 197. Հ. Ա. Տաշեան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց», Վիճնեա, 1895, էջ 654. — «Հմիր-Հաւրին»:

<sup>15</sup> Կիրակոսի Գանձակեցւոյ, «Պատմութիւն Հայոց», Ղուկ. մատ. Գ. Թիֆլիս, 1910, էջ 182; Գանձակեցու այս հատուածը խիստ աղաւաղուել է. տպուած է. «Յաւղագան», Միքրհաւան, Սաստրասաէս, Վաղենին: Գէտք է ուղղել ըստ Կաղանկատուացու, Ա. Ժ. 51, «Աւշագան», Մ(է)րհաւան, Սատոյ, Ասայ, Եսուաղենի:

<sup>16</sup> Կաղանկատուացի, Բ. Ժ. 197, Գ. Լ. 344, Գ. Ժ. 349. Սամուել Անեցի «Հաւաքմունիք ի գրոց պատմագրաց», Հրատ. Ա. Տէր-Միքրաւան, Վաշարապատ, 1893, ծանօթ. 28, էջ 286:

<sup>17</sup> Կաղանկատուացի, Ա. Ժ. 51: Միքր անուան ի ձայնաւորի սպումով կաղմուած է «Մհրական մեհեան», իսկ «Միքրհ ձեւեից» «Մրհհական մեհեան», — Ագաթանդեղոս, Ճ. 8 790, էջ 411 ու ծանօթ.:

<sup>18</sup> «Ախմական», 179, արձ. 1563թ. — «Ես Ազարեկի որդի Սմբատաց Միքրէն հողն իմ հայրենիք էր, իմ սրտով տուի ի սր. ուխտ Գանձաւարայ», Հրատարակիչը Սմբատն ու Միքր մեկ անձ կարծելով յատուկ անունների ցանկում դրել է «Սմբատ Միքր կամ «Միքր Սմբատ» Ուղղելի՝ «Ես, Աղաքեկ, որդի Սմբատաց, Միքրին հողն . . . տուի եւայլն»:

<sup>19</sup> Օրբելեան, ԿԶ. 418, «Ախմական», 117, արձ.

8. Ամիր — Ամիր-Ներսէհ Սիւնեաց իշխանորողի, Վասակ Սիւնու տղան<sup>1</sup>, Ամիրդատ Բճնեցի<sup>2</sup>:

9. Միհեր — Մեհեր Մամիկոնեան Տարօնի իշխան<sup>3</sup>, Մէհէրեան Պօղոս վարդապետ Առընձեցի ի Մուշ գաւառէ, Վենետիկի Միհերեան, Ժ. դար:

10. Միհեր — Մհեր Առիւծածեւ կամ Մեծ Մհեր, Մհեր Պատիկ կամ Մհերիկ, Մհերի դուռ Վանում, Մհերի տապան (=Սասուն)<sup>4</sup>, Մհերի բերդ Սամնում<sup>5</sup>, Մհերի տոհմ Սասնում<sup>6</sup>:

11. Մեհր — Մեհր աստուած<sup>7</sup>, Մեհրկան մեհեան<sup>8</sup>, Մեհրեւան, հայ ճորտ<sup>9</sup>, Մեհրուժան Արծրունի Դ. դարում<sup>10</sup>, Մեհրուժան Արծրունի լ. դարում<sup>11</sup>, Մեհրունիք նախարարական տոհմ Հայաստանում<sup>12</sup>, Մեհրծանպուէ Արծրունի Ե. դարում<sup>13</sup>:

12. Միքր — Միքրհուժան Արծրունի, եղբայր Աղանայ<sup>14</sup>, Միքրհունիք՝ նախարարական

1274 թ./օ: Միքրան անունը կաղմուած է Միհմանէց՝ հի անկմամբ: Այս ձեւով (Միհր-դատ, Միհր-ուան, Միհր-իսն) շատ գործածական է վրաց մէջ: Տեսէք և. Մեծիք Սէթբեկի յօդուածը (Ալբաւասադ և Մհերի հետքերը Վրաստանումն): «Բաներեր Հայաստանի գիտական ինստիտուտին» Ա—Բ գերք, Վաշարապատ, 1921—1922, էջ 98: Միհրդատի փոխարէն Միհր-դատ ունի նաեւ Գանձակեցին, Բ. 56:

1 Փարպեցի, Բ. Տ. իշ. 55, «Arm. Gr.», 57 ու Justi, 3 ու 14: Հմիտ. վրացական — «մհրան» — Ա-միր(ան) անուան հետ:

2 «Ախմական», 109, արձ. 1266 թ./օ: Թերեւս նոյն այս անուանն է նաեւ «Ախմական», 63, 1220 թ./օ արծանագրութեան մէջ «Աւել-դատու ձեւով, ուղղելի՝ Աւել-դատ (Ամեր-դատ = Ամիր-դատ):

3 Ալիսն «Հայապատում», Անեստիկ, 1901, էջ 396—397, կանայեանց «Զմինց տան պատմականը», 28 ու Մ. Արեղեան «Հայ ժողովուական վեպը», Թիֆլիս, 1908, էջ 88:

4 Գարեգին սարկաւագ «Սասմոյ Ճակրո, Թիֆլիս»:

1892, էջ լ:

5 Աբեղեան «Հայ ժող. վեպը», 47:

6 Աբեղեան, Նոյնը, 18, ծանօթ. 1:

7 Խորենացի, Գ. Ժ. 276 ծ.:

8 Ագաթանգեղոս, Ճ. 8 790, էջ 411 ծ.:

9 «Ախմական», 104, արձ. 1262 թ./օ:

10 Խորենացի, Գ. Տանկ, 253, Գ. Ի. 292, Գ. լ. 300 ու յան., Ցովհաննու Դրասխանակերտացւոյ «Պատմութիւն Հայոց», Ղուկ. մատ. Ե. Թիֆլիս, 1912, էջ 50, 51, Կաղանկատուացի, Ա. Ժ. 38—39:

11 Ղեւոնդեայ Ա. «Պատմութիւն Հայոց», Ա. Պետրբուրգ, 1887, Խ. 162—163:

12 Սովերը Հայկականք, Զ. «Պատմութիւն» և. Կերոսի պարթեւի հայոց հայրապետի, Վենետիկ, 1853, էջ 36, Հմմտ. Ի. Ածոնց, «Արմենիա և պահանջանականաց», ՍՊ, 1908, էջ 258:

13 Թովմայի Արծրունւոյ «Պատմութիւն տանն Արծրունեաց», Հրատ. Գ. Պատկանեան, Ա. Պետրբուրգ, 1887, Բ. լ. 84:

14 Փարպեցի, Բ. լ. լ. 63:

տոհմ<sup>1</sup>, Ներս-Մերհայ կամ Ներս-Մերհի  
վանք Աղուանից աշխարհում<sup>2</sup>:

13. Մեր — Մերուժան Արծրունի Դ. դա-  
րում<sup>3</sup>, Մերուժան Արծրունի, Պարտաւի Ժո-  
ղովին մասնակցողն Բ. գարում<sup>4</sup>, Մեր-Շա-  
պուհ Արծրունի Դ. դարում<sup>5</sup>, Մեր-Շապուհ  
Արծրունի Ե. գարում<sup>6</sup>, Մեր-Շապուհ Եպիս-  
կոպոս Մամիկոնէից Զ. դարի սկիզբներին<sup>7</sup>,  
Մեր-Շապուհ Եպիսկոպոս Մամիկոնենից Զ.  
դարի կէսերին<sup>8</sup>, Մեր-Շապուհ ի Շինական  
(= ի Զինական?) հայ նախարար Զ. դա-  
րում<sup>9</sup>:

14. Մեհ — Մեհքաւ Անձեւացի իշխան<sup>10</sup>,  
Մեհեկան կամ Մեհեկի, ամիս հայոց, Մեհ-  
նունեաց արիք<sup>11</sup>, Մահնունեաց թէմրա Եպիս-  
կոպոս Զ. դարի սկզբին<sup>12</sup>, Մեհնունեաց թա-  
գէսս Եպիսկոպոս Զ. դարի կէսերին<sup>13</sup>, Մեհ-  
նունեաց Ահարոն Եպիսկոպոս Է. դարի սկիզբ-  
ներին<sup>14</sup>, Մեհնունեաց Սամուէլ Եպիսկոպոս  
Է. դարի կէսերին<sup>15</sup>, Մեհնուժան Արծրունի  
Դ. դարում<sup>16</sup>, Մեհնուժան Արծրունի Թ. դա-  
րում<sup>17</sup>, Մեհենդակ Ռշտունի Դ. դարում<sup>18</sup>,  
Մեհեն Ռշտունի<sup>19</sup>, Մեհեկ, անձնանուն<sup>20</sup>:

<sup>1</sup> «Գատմոն/թիւն մասցրաց Հայոց եւ վրաց», Մա-  
դրաս, 1775, էջ 64:

<sup>2</sup> Կաղանկատուացի, Ա, Ը, 19, Գ, Ը, 343, Գ,  
Թ, 347:

<sup>3</sup> Կորին «Գատմոն/թիւն վարուց եւ մահուան ս.  
Մեսրոպյ վարդապետի», Վաւկ. մատ. Ժ. Թիֆլիս, 1913,  
էջ 49, Խորենացի, Գ, ցանկ, 253 Ժ., Գ, լեռ, 300 Ժ., Գ  
լու, 301 Ժ., Գ, լեռ, 302 Ժ., Ստեփանոսի Տարօնեցոյ Ասոլ-  
կան «Գատմոն/թիւն տիեզերական», Բ. տապ. Ս. գետեր-  
ուրդ, 1885, Բ, ա, 70—71:

<sup>4</sup> «Կանոնդիբոյ», 166:

<sup>5</sup> Թ. Արծրունի, Ա, Ժա, 67:

<sup>6</sup> Թ. Արծրունի, Բ, բ, 81:

<sup>7</sup> «Գիրք թղթոց», 41—48. Հմմտ. Երուանդ Վ.  
Տէր-Մինասեանց «Հայոց եկեղեցու յարաբերութիւններն  
ասորոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, էջ 82—83:

<sup>8</sup> «Գիրք թղթոց», 52, 55, 62, 70, 72, 73 ու 76.  
Հմմտ. Տէր-Մինասեան, 113, Ժանոթ. 1:

<sup>9</sup> «Գիրք թղթոց», 74:

<sup>10</sup> Փաւասոսի Բիւզանդացւոյ «Գատմոն/թիւն Հայոց»  
Հրատ. Ք. Պատկանեան, Ա. Գետերուրդ, 1883, Գ, Ժա,  
էջ 88. Հմմտ. Կանայեանց «Զոյանց տան պատմականը», 49:

<sup>11</sup> Ջենոր Գլակ «Գատմոն/թիւն Տարօնոց», Բ. տապ.  
Վենետիկ, 1889, էջ 48:

<sup>12</sup> «Գիրք թղթոց», 42:

<sup>13</sup> «Գիրք թղթոց», 70, 73:

<sup>14</sup> «Գիրք թղթոց», 146, 149, 151:

<sup>15</sup> «Կանոնդիբոյ», 130:

<sup>16</sup> Թ. Արծրունի, Ա, Ժ, Ժա, 62—67, 69, 70:

<sup>17</sup> Թ. Արծրունի, Բ, զ, 109:

<sup>18</sup> Փաւասոս, Գ, է, 15, Գ, ժ, 38, Գ, ժ, 40,  
Գ, դ, 61:

<sup>19</sup> Փաւասոս, Գ, Ժա, 88:

<sup>20</sup> Ալեշան «Հին Հայատոք», 141. Հմմտ. Մ. Պէշիկ-  
թաշեան «Տաղեր», Թիֆլիս, 1903, էջ 114. — «Եւ դու,  
Արքական կու ան ակադիա»:

15. Մահ — Մահեւան, Սիւնեաց աղատ՝  
ԺԱ. գարում<sup>1</sup>, Մահեւան, Սիւնեաց աղատ՝  
ԺԲ. գարում<sup>2</sup> Մահեւան Զուրջեանց, Սիւ-  
նեաց աղատ ԺԳ. գարում<sup>3</sup>, Մահեւանեանք,  
Սիւնեաց աղատատահմ<sup>4</sup>:

Վերոգրեալ վաթսունից աւելի գէտքե-  
րում Միհր անունը յեղյեղուած է 15 ձեւե-  
րով, որոնք են. Միթեր, Միթր, Թոր, Միհր,  
Միրի, Միր, Ամիր, Մեհեր, Միհր, Մեհր,  
Միրի, Միր, Միհր ու Մահ: Վարիանտների  
այս թուարկումից յետոյ մեղ մնում է անց-  
նել նշած խմբերի ստուգաբանութիւններին  
ու սրանց փոխաղարձ կապին՝ համոզելու  
համար, որ յիշեալ ձեւերն իրօք Միհր անու-  
ան հայացի փոփոխակներն են<sup>5</sup>:

<sup>1</sup> Օրբելեան, Կ, 328, 330:

<sup>2</sup> Օրբելեան, ԿԱ, 337:

<sup>3</sup> Օրբելեան, ԿԵ, 366:

<sup>4</sup> Օրբելեան, ՀԱ, 490:

<sup>5</sup> Միհր անունն ու սրա հետ կապ ունեցող անուն-  
ների փոքրից ցանկեր ունեն Հübschmann, «Arm. Gr.»  
52—54 ու 507, եւ Տաշեան «Ուսումն գասական հայե-  
րէն լեզուի», 562 ու 675—676: Մեր ցանկը կազմելու փի-  
տակցաբար գուրս ենք հանել Միհրի անունը կրող այն  
օտարազգիների (պարսիկ, վրացի, ասորի եւայլն) անուն-  
ները, որոնք յիշուած են մեր մատենագրութեան մէջ: Հա-  
նել ենք, որովհետեւ այն փաստից, որ օտարազգին Միհրի  
անունն է կրում, ոչ մի եղակացութիւն չի կարելի անել  
հայ կրօնի պատմութեան համար: Միհրանուն օտարազգուու  
մէջատակութիւնը կրօնապատմական նշանակութիւն չունի:  
Սակայն այս յիշատակութիւնն արժողութիւն ունի մի այլ  
տեսակէտից: Երբ մատենագրիը մէջ է բերում մի օտարա-  
զգու անուն, նա տալիս է կամ Հարազատօրէն այն, ինչ  
որ լվում է միջազգորում, եւ կամ այն, ինչ որ ինքն է  
կարողանում լսել: Երկու դէպէռում էլ նրա վերատա-  
դրածը, որ չուներ կրօնապատմական նշանակութիւն, այժմ  
սամանում է լեզուապատմական կարեւոր արժողութիւն.  
Նրանից մենք իմանում ենք, թէ ժամանակակից հայերն  
ինչպէս են արտասանում այս կամ այն անունը:

Մեր մատենագրութեան մէջ յիշուած ու Միհրի  
անունը կրող օտարազգիների անունները զատ-զատելով՝  
տեսնում ենք, որ նրանց մեծամասնութիւնը պատկանում  
է 4րդ, այն է Միհր խմբին: Այս կարգի անուններն են.  
Միհրան (գաւառ. Խորենացի «Մատենագրութիւնք», Բ.  
տապ. Վենետիկի, 1865, «Ալմարհացցոց», ԼԵ, 613), Միհրան  
(անձնանուն. Խորենացի «Գատմոն/թիւն», 231, 282 եւն,  
Փարպեցի, 132, 133 եւն, Սեբէոս, 41, որի ծանօթութիւնն  
ունի «Միհրէնան» Կաղանկատուացի: 23—Միհրեան, իսկ  
37, 196, 195 Միհրան, Օրբելեան, 63, 64, 65, 66): Շա-  
պուհ-Միհրան (Փարպեցի, 146—150), Միհր-Խոսրով (Յովէ-  
հաննու. Մամիկոնների «Գատմոն/թիւն» Տարօնոց, Բ. տապ.  
Վենետիկի, 1889, էջ 49), Միհր-Ներսէհ (Փարպեցի, 39,  
40: Օրբելեան, 58, 61, 159), Միհր-Վշնասպ (Փարպեցի,  
160, 162, 163), Բրզ-Միհր («Գիրք թղթոց», 133, 138),  
Զառ-Միհր (Փարպեցի, 118 եւն, — Ասողիկ, 80), Վեհ-  
Միհր-Շապուհ (Խորենացի, 349, Գանձակեցի, 35: Օրբե-  
լեան, 57) ու Միհրդատ (Խորենացի, 94, 127 եւն, Գրաս-  
խանակերոցի, 25, 29: Ասողիկ, 35, 39, 40, 63): 5րդ, այն  
է Միհրի խմբին պատկանում է Միհրէնան («Միհրան»)  
անունը (Սեբէոս, 41 Ժ., այլ եւ թերեւու Միհրէ-Արմիզ  
(«Գիրք թղթոց», 41), որ կարող է Միհր-Հորմիզդ եւ ինել

2.

Այս տասնեւհինդ խմբերի միջից Միթր (1), Միթր (2) ու Թոր (3) ձեւերի ծաղումը լեզուաբանօրէն ապացուցուած եւ անվիճելի է:

Նոյնքան ակնյայտ է Միհր (4) ու Միթր (5) ձեւերի համազօր լինելը: Միհր (6) ձեւը ծաղում Միթր ձեւից, ի ձայնաւորի անկմամբ, որ ծանօթ իրողութիւն է հայերէնում: Միհրաւան անունը, որի մէջ տեսնում ենք Միհր ձեւը եւ որը յիշում է Կաղանկատուցին, մի այլ պատմագիր, Գանձակեցին, ինչպէս արդէն ասել ենք, գրում է առանց ի ձայնաւորի սղման, լրիւ Միհրաւան:

Միթր (7) ձեւը ծագել է նոյնպէս Միհր-ից (5)՝ այս անդամ ի հնչիւնի անկմամբ: (Բառի վերջում պատահող այս հնչ արտասանվում նաեւ աշխարհաբարում մի քանի բառերի մէջ. օրինակ, աշխարհ, խոնարհ բառերն արտասանում ենք աշխար, խոնար:) Միթրով կազմուած անուններն աւելի յաճախարէպ են վրացերէնում (Միթր-դատ, Միթրուան): 8-րդ ձեւն — Ա-միթր — ծագում է 7-րդից — Միթր ձեւից՝ նախաձայն ա հընչիւնի յաւելմամբ, մի երեւոյթ, որին հանդիպում ենք ոչ միայն արխազերէնում ու վրացերէնում, այլ եւ հայերէնում ու պարսկերէնում: (Հայերէնում, օրինակ, Ռստոմ ու Ռստամ անունները դարձել են Ա-ռստոմ ու Ա-ռստամ, իսկ պարսկերէնում Հրուդենֆրիդունը՝ ԱւՓրերդուն եւ Պղատոն-Պլատոնը՝ Ա-Փլաթուն:)

Մեհր (9), Մերս (12), Մեր (13) ու Մեհ (14) ձեւերի նոյնութիւնն ու Միհր անունից ծագած լինելն ապացուցվում է նրանով, որ այս բոլոր ձեւերը երեւան են գալիս Մեհրուժան անուան փոփոխակների մէջ. — Մեհրուժան, Մերուժան ու Մեհուժան: Այս բարդ անուան երկրորդ բառի, այն է՝

(Հորմիգու Որմղի պարսկական ձեւն է. Հմն. Justi, 7—10; 7րդ, այն է Միթր խմբին Միթրատ (— Միհրատ), որ ունի Գանձակեցի, 56; այլ եւ հաւանօրէն յիշեալ Միթրատից: 12րդ Մեծի խմբին Մերհեւանդակ (Մերես, 46); 13րդ Մեծի խմբին Մեր-Սերուխտ (Կաղանկատուացի, 127, 128); Ա-բրջապէս 14րդ Մեհրի խմբին պատկանում է Մեհրեւանդ անունը, որ պահել է Ասոլիկը (էջ 112):

Այս թանկը լիւ է, բայց եւ այնպէս ցոյց է տալիս, որ օտարազդի անունների արտաբերութեան ժամանակ էլ Միհր անունը հայ բերանում ստացել է տարբեր ձեւեր, եւ այս ձեւերն են Միհր, Միթր, Մերհ, Մեհր ու Միհր:

«Ժան»-ի մասին տարբեր կարծիք ունին Հիւրշմանն ու Մարգուարտը, սակայն երկուսն էլ համաձայն են մի կէտում, որ այս բարդ անուան առաջին բառը — Մեհր, Մերհ, Մեր կամ Մեհ — ոչ այլ ինչ է, բայց եթէ Միթրա-Միհր անունը: Մեհր, Մերհ ու Մեհ ձեւերի մասին նոյն ապացուցվում է նաեւ Մեհրեւանդակ, Մերհեւանդակ, Մերհեւան (— Մերհեւան [դակ]), Մեհենդակ (— Մերի հենդակ) ու Մեհեն (— Մերի հենակ) անուանները: Այս անուան պարսկերէն ձեւն է Mihra-vandak, հին պարսկերէն Mithra-bandaka, որ նշանակում է Միհրի ծառայ, Միհրի «բանդա», Միհր-«գուլի»<sup>1</sup>:

Մեհեր (10) ու Մհեր (11) ձեւերի մասին պէտք է ասենք հետեւեալը: Դեռ եւս 1864 թուականին մկրտիչ կմինին յայտնի էր, որ Միխր էտք Մeher, Mithra և Մithras դրենիք<sup>3</sup>. կմինը գիտակցել է, որ մեր Միհրը հների Մեհեր ասածն է: Այստեղից շատ հեշտ էր հակառակը եղրակացնել եւ ասել, թէ ուրեմն մեր Մեհերը կամ Մհերն էլ հին Միհրն է, մի բան, որ դժբախտաբար չէ արել: կմինից մօտ 30 տարի յետոյ Փերդինանդ Յուստին էլ շեշտել է, որ Միհրդատ անունը հին պատմիքների մօտ պահպանուել է նաեւ Ասել թուշի: ու Meherdates ձեւերով<sup>4</sup>: Սրանից կարելի էր կրահել, որ Մեհեր կամ Մհեր անունները Միհր անուան փոփոխակներն են: Վերջապէս 1907 թուականին առաջին անդամ մեր բանասիրութեան վաստակաւոր Ստեփան Կանայեանցին վիճակուեց մատնանշել եւ ապացուցել, թէ մեր Մհերը Միհրը արեգակն է<sup>5</sup>: Կանայեանցի այս գիտով ոչ միայն մեր ժողովրդական վէպը կապուեց միհրանդաշտութեան հետ, այլ եւ հայ միհրաբանութեան հորիզոնները շատ ու շատ ընդլայնուեցին:

15-րդ — Մահ — ձեւը նոյնպէս Միհրի փոփոխակն է մեր կարծիքով: Մահեւան անունը, որի մի այլ ձեւն է Մեհեւան, ծագել է Միհր անունից: Այս ծագումը կարելի է բացատրել երկու կերպ: Մէկ բացատրութիւնը Մեհեւան անուան համար տուել է Յուստին, ըստ որի Մեհեւան = Mitnapanկամ

<sup>1</sup> Hübschmann, "Arm. Gr.", 52—53 ու 507:

<sup>2</sup> Hübschmann, "Arm. Gr.", 52:

<sup>3</sup> Թահի, 8 ու 26:

<sup>4</sup> Justi, 202 ու 213:

<sup>5</sup> Ստ. Կանայեանց «Զովանց տան պատմականը»:

43 ու 50 եւ նոյնի «Սասմայ ծռեր վէպի երեք փոփոխակող, էջ ԻԶ-Լ:

Մithrapan (պահլաւերէնում Mitn = Mithra-Միհր)՝ Սակայն բացի սրանից, կարելի է տալ ուրիշ մեկնութիւն էլ. Մեհեւան անունը կարելի է բղխեցնել զարձեալ Մեհրեւանդակ (= Mithrabandaka) անունից այսպէս. Մեհեւան = Մե[ր]հեւան[դակ]: Այս եթէ ոչ աւելի, գոնէ նոյնքան հնարաւոր փոփոխակ է, որքան էին Մեհենդակ ու Մեհեն վարիանտները: Մեհեւանից շատ չէ տարբերվում Մահեւանը, որից էլ առաջ է եկել Մահեւանեան տոհմանունը: Որ Մահ ձեւու իրօք եւ ոչ ենթադրաբար նոյնպէս հաւասար է Միհրին ապացուցուում է Հետեւեալով, յոյն պատմիհները առաջե. Են Միթուան... Միհր և անուան երկու ուշագրաւ փոփոխակ — Խօսիրա-νօς ու մանաւանդ Մահօանօς, այսինքն Մէ-այրան ու Մայրան, որոնց սկզբնական ձեւը կարող է լինել Մէահրան ու Մահրան: Այս Մահրանի (=Միհր-ան) մէջ Միհր անունը պահպանուել է Մահր խիստ հերաքրքրական ձեւով, որից վերջաճայն թ հնչինի անկէ մամբ ստացուել է Մահ, սրանից էլ Մահեւան ու Մահեւանեանը<sup>2</sup>:

Վերջում առանձնացնելով՝ մի երկու խօսք էլ ասենք յատկապէս Մեհնունիք տոհմանուան ստուգաբանութեան մասին։ Այս անունը կարող է ստուգաբանուել իրեւ

1. ՄԵՀ[Ե]Ն ունիք՝ ՄԵՀԵՆ անունից, ինչ-պէս Բագրատ ունիք, Արշակ ունիք եւ այլն,

2. Մեհ[եա]ն ունիք՝ մեհեան բառից,  
3. Մեհ ունիք՝ Բզնունիք, Վարաժնու-  
նիք, Մեծնունիք անունների ձայնական  
նմանութեամբ,

4. Մեհք ունիք, ինչպէս որ ունեն Սովետքն ու Մեսրոպ երէցը<sup>3</sup> այս դէպօռմ Մեհքունիքը դառնում է Մեհնունիք կամ<sup>4</sup> երկրորդ նի-ի յետաղարձ ազգեցութեամբ եւ կամ<sup>5</sup> առանց այս ազգեցութեան, երբ Մեհք անունն անկախօրէն փոխվում է Մեհն-ի<sup>4</sup>:

<sup>1</sup> Justi, 208.


<sup>2</sup> Εὐ. Τεκτονικόν θωρακικόν παραγόντας ανθεκτήν  
κεραυνού την καρδιάν αδέλφην επιβατήν Mah (= μητέραν,  
ζωγρέβεν, διαζήκη) ρωπήσεις Στεντέρ Justi, 184 σε ζε-  
μετεκατελλέρεις βασική η ίδια ή κατίν οφερόντας ή ζητήσεις ή κορτ-  
ρίνην ρήτην ανθεκτήν φωτιστικήν ορθονωτήνερ την ζωγρέβεν διαζή-  
(= διαράζη, διαζηρή) σε αριθμόν (ζελλών, αριθμών) ρωποκεραυνού<sup>1</sup>  
Hübschmann, "Arm. Gr.", 217, 472 σε 513.

Յ Առաջնորդ, Զ, Եջ 36 ու “Պատմութիւն մացորդ-  
դաց հայոց եւ վրացոց 64:

4 Պարսկերէնում թ-ի ն-ի փոխուելն ալներեւ տեսնում ենք ԱՀու բամազդա ու Ատուր (աստ, կրակ) բառերի փոփոխակներից. Ohramazd-ը (= Ahura-Mazda) գարձելէ Ohramazd կամ Ohanmazd (Justi, 9, 51; 188), իսկ Atut բառով բարդութիւնները կազմուել են նաև Atun

Այս չորս ստուգաբանութեան ժամանակ  
էլ մէջ տեղ է դալիս Միհր անունը : Սրանցից  
մենք գերազառութիւն տալիս ենք չորրորդ  
ստուգաբանութեանը :

Միհր անուան 15 խումբ ձեւերի փոխադարձ կապը կարելի է արտայայտել հետեւեալ մօտաւոր, փորձական ճիւղազրութեամբ, որի մէջ սովորական գծերը ցոյց են տալիս ապացուցուած ծագումն, իսկ կէտանիշ գծերը՝ թէական առընչութիւնը:



բառով (Justi, 51, 486), եւ Atur-Ormizd-ը դարձել է Atun-Ohaumazd (Justi, 51): Մեր նիւթի տեսակետից աւելի հետաքրքրական է, որ Mithra-Mithra-Միհր անուան փոփոխակը սպահաւերենում կայ Mitnē ձեւով, որից եւ ծագել են Mitn-ayibar, Mitn-akawait, Mitn-apan ու այլ բարդութիւնները (Justi, 207, 208, 214 ու 503): Ինչպէս եւ Atun-Mitn անուանը, որի համազօրը կը լինէր Atur-Miht (Justi, 51): Ըստ այսմ Mithr-Mitn-ի զուգահետ օրինակը հայերենում կը լինի Մեհր-Մեհն:

Ի գեպ, աւելացնենք, որ ը-ի՞ ն-ի փոխուելու հնաւրաւորութիւնն ընդունելը նոր կլո. և տալիս Թ. Արծրունու երկու ստուգաբանութեանը, որոնցից մէկի համաձայն Արծրունիք = Արգվունիք («վան բնակութեան նախնացն յ Արգվունիք» կոչեցին Արծրունիքը. Ա. գ. 44), իսկ ըստ միւսի Սանասուն (= Սասուն) տեղանունը ծագել է Սանասար անունից («առքա են գուեահք ասորոց, որ շուեցին զինի Աղքամելեայ եւ Սանասարայ . . . յօրոց անուն ինքեանք Սանասունինեայք զինիքեանս անուանեն», Բ. է, 121): Հատակած Սասուն անուան զարդացման օգակներ ենթագրուում են 1. Սանասար, 2. Սանասալ, 3. Սանասուն, 4. Սանսուն, 5. Սասուն: Զօրբորդ — Սանսուն — իրական ձեւի վրայ հիմուելով ծագել է Փողովրդական ստուգաբանութիւնը, թէ «Քարե սամն սուն եք զարկել, ըսրա անուն ա'եղնի Անսուն, Սասունն: Հմտութիւնը. Աբեղեան «Հայ ժող. վեպի», 48:

Յանկը, որ մենք գրի ենք առել վաթսունից աւելի դէպքեր խմբելով եւ որն այս վիճակում անշուշտ չառ ու չառ հեռու է լրիւ լինելուց, կազմուած է այն միտումով, որ ցոյց տայ, թէ Միհր անունը չառ աւելի բաղմաթիւ անուների մէջ կայ, քան առաջին հայեցքից թուում է: Խմբերի ստուգաբանութիւններն, այլ եւ նրանց միջեւ եղած կազմ պատկերացնող ձիւղազրութիւնն աւելի են պարզում տեսարանը՝ երեւան հանելով Միհր անուան զարգացումն ու ծաւալումը: Այս բոլոր փաստերը միասին հերքում են այն մատայնութիւնը, որի հետեւանքով Միհրին մի քանի տող է նույիրվում հայ հեթանոսական կրօնի պատմութեան մէջ: Այն ինչ, ինչպէս ասել ենք, հայ անձնանունների բառզրից, մանաւանդ հայ գիցանունների միջից քիչ անուն կարելի է մատնանշել, որն այսքան յաճախակի, այսքան բազմազան ու այսքան յարատեւ արտայայտումներ ունեցած լինի մեղանում: Այս անտեսուած երեւոյթն այնքան էլ անկարեւոր չէ: Անունը ոչ միայն որոշ մշակոյթի ցուցանիշ է ընդհանրապէս, այլ եւ յայտնի դարաշրջաններում կրօնական-հմայական իմաստ ունենալով՝ պաշտամունքի ու հաւատալքի անմիջական արտայայտութիւն է: Միհր անուան մէծաթիւ ու բազմազան փոփոխակներն անառարկելի ապացոյց են այն իրողութեան, որ արեւի ու կրակի աստծու պաշտամունքը չառ աւելի խոր է թափանցած եղել հայ քաղաքակրթութեան ծալքերը եւ նրա հաւատալքով չառ աւելի են տողորուած եղել հայ դանդուածները, քան կարծւում է մինչեւ հիմայ: Եթէ հայ հեթանոսական կրօնին թըշնամի մէկ միջավայրում, որպիսին հայ քրիստոնէական միջավայրն է, մենք դանում ենք Միհր անուան այնքան բուռն տենչանք, որ տեսում է դարեր ու հազարամեակներ, ապա պէտք է երեւակայել, թէ որքան մէծ է եղել Միհրի հմայքը մինչ-քրիստոնէական Հայաստանում:

Միհրապաշտութիւնն, անկասկած, հայ կրօնի պարզացման ամենազլիսաւոր առանցքներից մէկն է եղել:

(Ծարունակելի:)

Թաղես սիդլաբէցնան

Երևան:



## ՊԱՏՄԱԿԱՆ

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԵՊԻԻ ՔԷՇՄԻՒՐԵԱՆ

Գ. Լ. Ա. Խ. Զ.

(Ծարունակողնթիւն:)

Հասքէօյի Ս. Ստեփանոսը Կ. Պոլոյ Հայ Եկեղեցիներու ամենէն գեղեցիկն է իր Ճարտարապետութեամբ. բարձրաբերձ եւ հոյակապ կամարով մը հսկայապէս կանգնած գիւղին Օտաւարքաբուսի կոչուած բարձոնքին վրայ տիրապէս կ'իշխէ կարծես, Ոսկեղջիւրի գետակին: Կը պատմուի թէ այս Եկեղեցին նախապէս, այժմեան բարձրութենէն մէկ յարկ աւելի պակաս կառուցանել որոշուած էր, եւ ըստ այնմ՝ շէնքը աւարտելէ յետոյ երբ երդիքին շինութեանը կը ձեռնարկուի, Հասքէօյի դէմի ծովեզը՝ Շեֆթէրտար բնակող էսմա Սուլթան անմիջապէս արգիլել կու տայ զայն, առարկելով թէ Հայերը դիմամբ այդքան բարձր կը շինեն իրենց Եկեղեցին, որպէս զի իր պալատին ներսը ու կանանցը դիտեն: Սուլթան Մահմուտի քրոջը այս յիմարական որոշումը վերջնական էր եւ վճիռը անդառնալի:

Մինչ այս մինչ այն, Հասքէօյաբնակ ջուջերը Եղելրաթիւնն անմիջապէս կ'իմացնեն Պեղձեան Յարութիւն ամիրային, որ կը խոստանայ յարմար առթիւ մը պէտք եղածն ընել, թաղն ու Եկեղեցին այս վիճակէն փրկելու: Եւ յարմար առիթն ալ կը ներկայանայ վերջապէս:

Ուրբաթ օր մը, Երեկոյեան դէմ Սուլթան Մահմուտ իր հետն առած իր սիրական Ա. Պէղձեանը, նաւակով դէպի քէհաթհանէ պտոյտի կ'ելլէ. Երբ նաւը կը հասնի Տէֆթէրտարի եւ Էյուպի միջեւ, ուրկէ ճակատ առ ճակատ կը տեսնենէր Ս. Ստեփանոսի կիսաշէն Երկյարկ Եկեղեցին, յանկարծ Պէղձեան դէպի ճակատ կաղաքի ուշադրութեամբ կը դիտէ Նախավիայի տաճարը, որ Սուլթան Մահմուտ կը հետաքրքրուի եւ Պէղձեանի առած այդ գիրքին պատճառը կը հարցնէ.